

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ», Ի

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂԵԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Ի ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Արտոգրատ. ժ. ՄԻՒՆԻՅԷ

# ՆՈՐ-ՕՐ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեղանակութիւն ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԳԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գրքերի համար	Տարեկան	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀԱՆԻ ՇԱԲԱԹ

Տարեկան . . . .	Ձրանց	18
Վեցամսեայ . . . .	»	10

ՌՈՒՍԻՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱԲԱԹ

Տարեկան . . . .	Բուբլի	7
Վեցամսեայ . . . .	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԿԵԼ Է

ԵՒ ԹՂԵԱՍԱՐԻ ՇԱԲԱԹ

Թերթին Վարչութեանը վրայ է:

## ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»-ի վարչութեան հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրատարակուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը:

Ներկայ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՏՆԱՐ ՍՄԱՐՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ-ՕՐ»-Ի ԸՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՎԱՆԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

Այս առթիւ եզրուածի և Արտասահմանի արգոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագիրները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու գըլխաւոր միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գտած գործնական քաջալերանքը:

## ՀՐԱԻՐ

### ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՆԳԻՍԻ

Նոր Ի. րգ. գարուս հետ կը սկսի Գ. դար Միլիթարեան Ուխտիս, զոր երջանիկ Հայր մեր հաստատած է Աստուծոյ և Աստուածամոր նախախնամութեամբ՝ յ'8 Սեպտեմբերի 1701 տարուոյ: Փափագելով այս երկուհարիւրամեայ Յորեւանի յիշատակը՝ ըստ կարի մերում և ըստ տկարութեան՝ արժանաւորապէս կատարել, ի միջոցի լրման և յարման երկու անցեալ դարուց և Գ.ին, յ'8 Սեպտ. 1901, պարտք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական ազգայնոց, որոց բարոյական օգտին նուիրած են Հայր մեր Միլիթար և իր որդիքն՝ իրենց նպատակը, ջանքն և աշխատանքը, այլ և համարձակիմք խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպատար, ի պէտս (ծախուց) պատրաստութեան հանգիսի և մնայուն Յիշատակաց Յորեւանին, որոյ համար այլ և այլ գրաւոր վայելչազարդ գործք առաջարկուած և սկսուած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ նախահօրս մերոյ և ի վայելս զինքն և իր գործը յարգողաց, որոց ընծայաբերութեան կամ տրեց համեմատ՝ կ'եննէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ Յիշատակներէն, և անկարողաց այլ նպատակու՝ մնան ձրի բաշխելիք ինչ:

Եթէ լրութիւն Հայոց. յիւս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է և ունի, սակայն, հարկ է խոստովանել, որ գրեթէ առհասարակ ազնուապէս միաբաներ է այս երկերիւրամեայ շրջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր Միլիթար, ճանչնալով զնա մի ի գերագոյն բարբերաց,

երախտաւորաց և պարծանաց իւրոց, որոց համաձայն՝ օտարազգիք անգամ տեսողք իր կանգնած և կանոնած վանաց և վարժից, վկայեն գովութեամբ և զարմանօք:

Չեմք տարակուսիր որ այս նոր՝ երրորդ դարուս սկզբան և ընթացից մէջ՝ նորոգէ Հայրն Միլիթար իր եռաշնորհ հոգին՝ Աստուածսիրութեան, ընկերսիրութեան և իմաստասիրութեան՝ յորդիս իւր, և ըլլայ անդադար բարեխօս վասն Ազգիս, ձայնակցելով իր և մեր նախնի երանաւէտ Ս. Հարց՝ լուսաւորչաց Հայոց:

Հ. ՂԵՒՈՆԻ Մ. ԱԼԻՇԱՆ

## ՀԱՅ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԳԱՍՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

### ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ամեն թերթ, որ իրեն սկզբունք ըրած է զբաղիլ հանրութեան գերագոյն ու ազգային կենսական շահերու հարցերովը, չը զիջանի երբէք ընդունիլ սիւնակներուն մէջ կարգ մ'անիմաստ ու թագուն գիտութիւններէ ներշնչուած գրութիւններ, որոնք պիտի ծառայէին աւելի պղտորելու մտքերը, քան թէ շինելու գաղափարներն ու դէպ 'ի լաւն առաջնորդելու հանրութիւնը:

Նոր Օրը, Լսարան-Ընթերցատուն ընկերութեան օւկան, այս սկզբունքին հաւատարիմ, իր երեւման առաջին օրէն ջանացած է ընթերցողները շահագրգռելու այնպիսի խնդիրներով, որոնք իրօք հանրային ուշադրութիւնը լարուած կը պահեն և որոնց լուծումը կրնայ լայ մը սփռել մութ խորշերու մէջ, ուր սովորաբար կը ծկտած ու թաքցած կը ըլլայ հանրային գործիչի տիտղոսը կող խաչագող մը:

Ամերիկայի ազատական մամուլը մեզի օրինակ թող՝ ըլլայ և առաջնորդ, եթէ կ'ուզենք միշտ բարձր պահել մերինը:

Նոյն սկզբունքի տիրապետութեան տակ, «Նոր Օր» ընաւ չէ պատասխանած ստայօղ զրպարտութիւններով ու անհիմն աղմուկներով հրապարակ նետուած անլի յօդուածներու, որոնք յօդուած ըսուելու համար, տպագրուած ըլլալու չնորհը միայն ունին, ուրիշ ո'չինչ. արհամարհոտ լուրութիւն, այս եղած է մեր պատասխանը:

Սակայն, թերեւս քիչ ըլլայ թիւն անոնց, որոնք կ'ըմբռնեն այս լուրութեան իսկական իմաստըն ու կարեւորութիւնը. կրնան գտնուիլ մեր հասարակութեան մէջ՝ այնպիսիներ — միամիտ ունկնդիրներ կամ չարամիտ դաւադիրներ բընականաբար — որոնք «Նոր Օր»-ի այդ երկա-

րատե ու հանդարտ լուրութիւնը մեկնեն ապիկարութեան կամ պարտութեան խոստովանութեամբ:

Ուստի, ճամբու բերելու և զգաստացնելու համար այդ ողորմելիները, (որոնք սրճարաններու կամ փողոցներու մէջ միայն վարժուած են ու կրնան պոռոտաբանել) անցողակի մէջ բերենք Հայ Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան հիմնարկութեան օրէն մինչև հիմայ ձեռք բերուած արդիւնքները, որոնք ինքնին կը բաւեն հաստատելու բոլոր անձնուիրութիւնն ու գործունէութիւնը, զոր ցոյց տուած է յիշեալ ընկերութեան վարչութիւնը, առանց մագի չափ չեւսինք վերև, անցողակի պիտի գծենք այդ մէկ տարուան գործունէութեան շրջանը, սպասելով ընդարձակ տեղեկագրին, որ պիտի կարգացուի յառաջիկայ Սեպտ. 9ին տեղի ունենալիք Ընդհ. Ժողովոյ գումարման մէջ, ու միամտայ հաշուեկշիւին, որուն թուանշանները, պերճախօս պատասխաններ՝ կարկուտի պէս պիտի թափին կարգ մը ճաղատ ու դատարկուղեղ գլուխներու վրայ. այն՝ պիտի դատապարտութեան խարանդ գործմէ այդ հաշուեկշիւը, անպատկառ ճակատներու, որոնք, Ընդհ. Ժողովոյ գումարման օրը, շիկներու համեստութիւնը պիտի ունենան երբէք. իսկ տեղեկագիրը, որ Գործ. Ժողովոյ մէկ տարուան պաշտօնավարութեան կեանքը պիտի ամփոփէ, այժմէն կարելի է ըսել թէ՛ յայտնութիւն մը պիտի ըլլայ անի . . . :

Անցեալ տարի օգոստ. 1ին կը հիմնուի այս ընկերութիւնը, որուն շուրջը՝ մտտիկ թուականէ մ'ի վեր — Նոր Օրի երեւումէն կ'սկսի անշուշտ այդ թուականը — մօրուտներու կանաչ բնակիչներուն կռկուցն ու առիւծենիի մէջ փաթթուած ակաղեղներու զոնչոցը՝ տեսակ մ'արտաւոց երաժշտութիւն կը կազմեն, երգասացներու նախանձը շարժելու չափ սքանչելի՝ այս ընկերութիւնը կ'ըսեմ, որ կը կոչուի Լսարան-Ընթերցատան ընկերութիւն, ժողովրդին թարմ ու ընտիր ուժը կը ներկայացնէ:

Նախ խեղճուկ ու անձայն, մէկ ամսուան մէջ կ'սկսի կազմակերպուիլ, ու հարկ կ'ըլլայ կազմել Մայր-Գիււան ու Վարչութիւն, այն է Գործ. Ժողով: Ընթերցութիւնները կ'աւարտին, գործի կ'սկսի Գործ. Ժողովը: Առաջին քայլին մէջ կը հանդիպի ահագին դժուարութիւններու, որոնց յաղթել պէտք էր: Մէկ երկու անգամ Լսարան կը տրուի, հասարակութեան համակրանքը դարձնելու համար դէպ 'ի նորակազմ հաստատութիւնը. բանախօսութիւններ կ'ըլլան, որոնց մէջէն մին, ունկնդիրներէն ոմանց առաջարկին վրայ կը տպագրուի. «Գերարուեստի Կերը» Տիար Ե. Տէմիրճեանի բանախօսութիւնը: Ընկերութեան հասոյթ պէտք էր սակայն, ուստի քանի մը ժողովներու մէջ ծեծուելէ յետոյ, կ'որոշ-

ուի ներկայացում տալ 'ի նպատակ ընկերութեան ու կը կանչուի Տիար Թ. Փասուխանեան, որ այն ատենները դեռ նոր էր հասած Բարիզէն Աղեքսանդրիա, իր հիւանդութեան դարմանը գտնելու նպատակով. եկաւ Փասուխանեան ու ներկայացման նախապատրաստութիւնները տեսնուեցան. միայն 13 օր, Կարգադիր Մասնախմբի մը խրտուիլակին շուրջը պտտելէ վերջ՝ Գործ. Ժողովը զգաց թէ միս մինակ է ինք ու գործելու հարկը՝ անխուսափելի. ի՞նչ ընէ. Գանձապետը տիտղոսօրէն է միայն գանձապետ, գանձին մէջ փող մը չ'կայ, ընկերներէն հաւաքուած չնչին ամսավճարներու գումարն ալ անհրաժեշտ ծախքերու յատկացուած ըլլալով. և սակայն պէտք էր աւարտել սկսուածը. երկար կ'ըլլայ մանրամասնութիւնը ներկայացման. մէկ բառով, յաջողեցաւ. Գումարը ձեռքերին, գանձապետն ու Գործ. Ժողովոյ միւս անդամները, սկսան տեղ մը փնտռել, տեղ մը, որ յարմար ըլլար Լըսարան-Ընթերցատան. քանի մը շաբաթներու խորհրդակցութենէ վերջ, հաստատուեցաւ թէ՛ այդ գուշակայ գումարով կարելի չ'էր բանալ Լսարան-Ընթերցատունը. ուստի պէտք էր հասոյթի ուրիշ աղբիւրներ ալ խորհիլ ու գտնել, որպէս զի կարելի եղածին չափ շուտով բացուէր բաղձացուած ու սպասուած Լսարան ընթերցատունը:

Այդ միջոցին էր որ Գործ. Ժողովը յղացաւ թերթի մը հրատարակութեան գաղափարը, յիշելով հիմն. կանոնագրին 21-րդ յօդուածին տրամադրութեանը վրայ, որուն համեմատ Գործ. Ժողովը կրնայ ստեղծել հասոյթի աղբիւրներ, ինչպէս են, դաշտային հանդէս, Թատերական ներկայացում, Պարբերական հրատարակութիւն, հանգանակութիւն, վիճակահանութիւն ևն: Այս հիման վրայ Գործ. Ժողովը ձեռնարկեց հրատարակութեան « Նոր Օր »-ի, կոխտեղով կարգ մը խոչընդոտներ, որոնք ընկերային կեանքի ու շարժման ընթացքին մէջ ո՛չ նուազ յաճախաբար գէպ են:

(Շարունակելի)

### ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԿԱՏՈՒՆԸ ԲԱՅՈՒՆԻ

Պատ. Վարչութիւն « Նոր Օր »-ի

Աստ

Բարեբաղդ ենք ընկերութեանս բոլոր անգամներուն յայտարարելու թէ՛ Գործ. Ժողովոյ մէկ տարուան ջանքերը պսակուեցան այսօր: Վերջապէս ԲԱՅՈՒՆԻՑԱԻ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԿԱՏՈՒՆԸ Ապտիսի Մեծ-Պողոտային վրայ, Ալ-Մուգադա-մի տպարանին դիմաց, Սէլիմ բաշայի ապարանքը:

Յառաջիկայ շաբթուան մէջ պիտի կահաւորուին սրահն ու սենեակները, և հօն գումարել կը յուսանք ընկերութեանս օրինաւոր տարեկան ընդհ. Ժողովը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտեմբեր 9-ին կիրակի ցերեկը:

Ընթերցասրահին կից է գասարանը, ուր պիտի աւանդուին գիշերային դասեր, չափահասներու համար: Այն երիտասարդները, որոնք կը փափագին սկսիլ դասառութեան, այժմէն թո՛ղ դիմեն « Նոր Օր »-ի Խմբագրատունը և արձանագրեն իրենց անունները:

Ի դիմաց Գործ. Ժողովոյ

Լսարան Ընթերցատուն Ընկերութեան

Վ. Ատենադպրի Ատենապետ

Ե. ԳԱՐԱԳԱՇ Ս. ԲԻԻՐԱՏ

Գահիրէ, 23/8 օգոստ. 1900

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԲԻԱՆ

(Շարունակ. նախորդ թիւէն)

Ահա՛ւասիկ օրինակ մը.

Կիպրոսի կղզիէ՛ն — որ, ինչպէս գիտենք, մարդկութեան արտաուց ծնունդներ տալու համբար կը վայելէ — Ք. Ա. Պէյ, թուականէս երկուք ու կէս տարի առաջ լրագրի մը հրատարակութեան կը ձեռնարկէ, իբրև խմբագիր-Արտօնատէր. շատ մ'ընկերակիցներու առջև կ'ուխտէ ցվերջին շունչ հաւատարիմ մնալ ճշմարտութեան, միշտ բարձր ու անաղարտ պահել թերթին պատիւն ու վարկը ու վերջապէս կը յաջողի շարունակել իր սոյն հրատարակութիւնը, քանի մը ձեռնհաս համակիրներու աշխատակցութեան շնորհիւ:

Յիշեալ լրագրին 1 և 2 թիւերը հրատարակուելով, Կ. Պոլիս զրկուեցաւ թղթատարով, օրինակ մը Սուլթանին մատուցուելու համար կայսերական Ա. Քարտուզար Թահսին Պէյին, ուրիշ օրինակ մ'ալ ներքին Գործերու նախարար Մէմուտ հաշային:

Երկրորդ մէջ հազիւ թէ լրագիրը կը կարգացուի, այս փորձանքին առաջն առնելու համար Կիպրոսի Շէրիի գատարանին հեռագիր մը կը քաշուի, որուն թարգմանութիւնը կը գնենք հոս բառ առ բառ:

Իսլամութեան խորանին սրբազնագոյն մարմնացում մեր վեհանձն Բարերար Տէրը որ երկրագոյնի Սալիֆան է, իւր գէ՛տ կարգ մը զրպարտութիւններ հրատարակող Կիպրացի Ք. Ա. Պէյի ներքեց այս անպամ եւ նորին Կայսերական Վեհափառութիւնը անոր 500 լիբա նուիրեց:

Կը յայտարարուի թէ՛ կարեւոր է ինչեալ յորդորել որ իր սեփական ստուերով ու գործիքներով Կ. Պոլիս գայ. նաեւ հեռագրով իմացուցէ՛ք իր մեկնումին օրը:

Դժուար չէ՛ ըմբռնել թէ՛ այդ հեռագիրը պարզ նենգութեան մը նախաբանն է. կը ցաւինք որ մեր Արտօնատէր Պէյը, հինգ տարեկան տղու մը չափ իսկ դատողութիւն չունի եզեր. ի՞նչպէս կ'ըլլայ որ կառավարութեան գէ՛տ usայոյ զըրպարտութիւններու հրատարակիչ մը, թէ՛ կայսերական ներման և թէ՛ պատկառելի 300 ոսկոյ պարգևի մը կ'արժանանայ. եթէ այս շնորհը իրօք շնորհ մ'էր, կարելի էր դրամը հեռագրով զրկուիլ ու այնուհետև տպագրելն ու արտօնատէրը ուզուիլ. իսկ եթէ հրատարակութիւնները սուտ ու փուտ զրպարտութիւններ էին, միթէ զրպարտիչ մը 300 լիբայի պարգևով մը կը պատժուի. անտարակոյս, Օսմ. Կառավարութեան պատժական օրինադիրքը երկուքի բաժնուած ըլլալու է որ, մէկուն տրամադրութիւններէն երկրին ներսերը, իսկ միւսիններն ալ երկրին դրսերը գործադրելի են . . . . :

Թուրքիոյ ներսերն ապրողներն երբ որ քաղաքական խնդիրներով ամբաստանուին ու դատապարտուին, Մարմարայի բացերը, Աքքէներ, Հնոտոսներ և Ափրիկեան Տրիպոլիտեր կը նետուին. մինչդեռ Արտասահմանի ամբաստանեալ կամ դատապարտեալները Կայսերական ներման ու նուէրներուն կ'արժանանան: Վերոյիշեալ իրողութիւններէն դիւրին է արդէն հետևեցնել թէ՛ անոնց բոլոր գործերը նենգութիւն ու խարդախութիւն կը հոտին:

Մեր Ք. Ա. Պէյը սակայն, այս կէտերուն ընաւ կարեւորութիւն չ'տալով ու Շէրիի Դատարանին թերագրութիւններէն հրապարտուած ու հեռագրի թուղթին կարմիր երանգին չ'գիմարալով, մանաւանդ 300 լիբան ձեռք ձգելու անզուսպ տենչանքին բոլորովին անձնատուր, 2 շաբաթուան մէջ ամեն բան ոտքի տակ առաւ Ժողովից տառերն ու գործիքները, ու, խոստացուած 300 լիբայի գումարին ստացման գիւրդութիւն ընծայելու կարող կարծուած անձնատուր:

Թեանց ու բարձրատիճան պաշտօնատարաց ընծայ տրուելու համար 150 ոսկիի արժէքով սեղանական այլ և այլ ապրանքներ հետն առաւ, և, կայծկոխ Արդայի մը պէս դէպ ի Պոլիս ճամբայ ելաւ:

Հարկ է հոս յիշել թէ՛ մեր Ք. Ա. Պէյը, իր ճամբորդութենէն 3 ամիս առաջ կը տառապէր արդէն փամփուշտի հիւանդութենէ մը, որ իր հինգ օրուան ճամբորդութեան մէջ աւելի սաստկացաւ. սակայն, քանի՛ կ'երեւակայէր թէ՛ իրեն նուիրուելիք 300 լիբայով Կ. Պոլսոյ պէս մայրաքաղաքի մը մէջ շատ հեշտ պիտի ըլլար իրեն արագ բժշկութիւն մ'ստանալ, քաղցրիկ յոյսերով ու երանքներով օրօրուած՝ կը ջանար քնացնելու վերարթնցող ցաւը, որ զինք կը տանջէր:

Մեր լրագրագետը, որ աւելի դրամին քան թէ ազատութեան էր սիրահար, որջ առողջ հասաւ Կ. Պոլիս. ու, — ինչպէս որ սովոր է մեծարանօք ընդունիլ այսպիսիները — մասնաւոր պաշտօնաներու կողմէն դիմաւորուեցաւ:

(Շարունակելի)

### Ա Չ Ք Ա Յ Ի Ն

Աղէքսանդրիոյ Հայոց Թագ. Խորհրդոյ կողմէն ստացած ենք հետեւեալը, զոր կը հրատարակենք հանդերձ թարգմանութեամբ.

Պատճէն շնորհակալութեան գրոյն Իտալիոյ Հիւպատոս Բոմանօ Ասպետին ուղղեալ առ Արժ. Տ. Վահրամ Մ. Վ. Ազարեան:

R° CONSOLATO  
D'ITALIA Alessandria d'Egitto le 20 août 1900  
N° 3167

Monseigneur,

En mon nom ainsi de celui de l'Agent Diplomatique d'Italie, je vous adresse mes plus vifs remerciements pour la messe de requiem que vous avez bien voulu célébrer ainsi que pour le discours que vous avez prononcé en l'honneur de la mémoire de feu mon regretté souverain Humbert I. et je vous prie d'agréer l'assurance de ma haute considération.

Le Consul d'Italie,  
C. ROMANO

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆ  
ԹԻԻ 3167 Աղէքս. Եգիպ. 20 օգոստ. 1900

Ս. Հա՛յր,

Յանուն իմ և յանուն Իտալական Դիւանագիտական Գործակալութեան, կ'ուղղեմ Ձեզ իմ ամենաշեղծ շնորհակալիքը հոգեհանգըստեան Պատարագին համար զոր բարեհաճեցաք մատուցանել ինչպէս նաև այն ճառին համար զոր արտասանեցիք ՚ի պատիւ յիշատակին իմ ողբացեալ հանգուցեալ Վեհապետին, Ուպէրթօ Ա. Ի, և կը խնդրեմ որ ընդունիք հաւատիքն իմ ամենաբարձր համարման:

Իտալական Հիւպատոս  
Ասպ. ԲՕՄԱՆՕ

Իտալական փոխ-Հիւպատոս Պուրտէզէ Ասպետը 2-րդ քաղցրիկ օր Աղգ. Առաջնորդարան գալով յանուն Հիւպատոսին իր խորին շնորհա-

կարիքը յայտնեց 'ի յիշատակ Ումպերթօ թա- գաւորին կատարուած հոգեհանգստեան պաշտօ- նին և արտասանուած քարոզին համար: Պ. փոխ- Հիւպատոսը քարոզին պատճէնը խնդրեց որ իտա- լական կառավարութեան պիտի խրկուի, հան- գերձ հանդէսին մանրամասն նկարագրութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ուրախութեամբ կը կարգանք Մարսիլիոյ թերթերէն Le Petit Marseillais ի մէջ, թէ մեր հայ պզտիկներէն մին՝ Վահան Փորթուգալեան Լէգէճններու տարեկան համընթացութեանց մէջ « excellence » նօթը ստացեր է իւր անթիւ ֆրան- սացի փոքրիկ ընկերներուն մէջ: Նոյն թերթէն կ'իմանանք թէ փոքրիկ Վահան Փորթուգալեանը վեցերորդ դասատան Ա բաժնին մէջ կը գտնուի և մասնաւոր մաթիմատիկայի մէջ առաջին հան- դիսացի է բոլոր ֆրանսացւոց մէջ:

Ընդունած ենք « Զէյթունի Անցեալէն ու Ներկայէն » անուն գրքին Ա. մասը, զոր գրած է « Զէյթունցի » ն. 160 էջ in 8° դիրքով: Իբր- քին մէջ կը գտնուին նաև Զէյթուն քաղաքին տեսարանը, քաղաքին քարտէսը և Զէյթունցու մը պատկերը:

Վերին աստիճանի հետաքրքիր գործ մ'է որ մեր ազգին կը նուիրէ Զէյթունցին. հոն կը տեսնենք ամէն տեսակ մանրամասնութիւն Զէյ- թունի մասին, ժամանակագրական կարգով մին- չև 1894 թուականը. կ'իմանանք Զէյթունի չորս իշխաններու ծագումը, անոնց ըրած գործերը, քաղաքործութիւնները, մղած կռիւները, անոնց կառավարելու ձևը, նիստ ու կացը. ելն. ելն.: Հոն կը կարգանք թէ ի՞նչպէս երեք Սուլթաններ Զէյթունի համար հրովարտակներ հանեցին անոր տեղական ինքնավարութիւն շնորհելով, և թէ ի՞նչպէս Զէյթունցիք տարեկան 15,000 դահե- կան ամենայն հաւատարմութեամբ և կանոնա- լորապէս, Կ. Պոլսի զրկելով կը յանձնէին Այա Սօֆիա մզկիթին վարչութեան, այդ Գումարը սուլթաններու հրամանով պիտի յատկացուէր միայն յիշեալ մզկիթին ծախուց: Իբրքը մէկ խօսքով մեծ պակաս մը կը լինէ, և այնչափ հետաքրքիր է որ այդ 160 մեծ էջերը՝ մարդ մէկ ժամէն կը լսուի:

Գարտններու և պատկերներու գեղեցկու- թիւնը, անոնց սքանչելի գոյները, զրքին հիա- նալի տպագրութիւնը, թղթի անհամեմատ գե- ղեցկութիւնը մեծ պատիւ կը բերեն Վիէննայի Միլիթարեանց տպարանին ( ուր տպագրուած է « Զէյթունի Անցեալէն ու Ներկայէն » և Եւրո- պայի ամենամեծ տպարանագետներու նախնաձը կրնայ շարժել: Այս հրատարակութիւնը, ինչպէս Վիէննայի տպարանէն ելած գործերէն շատերը կարելի է անուանել նոյն իսկ ամենալուսաւորեալ երկիրներու մէջ, Luxe ի տպագրութիւն. Գուցէ աւելի լաւ կ'ընէր Պ. Հեղինակը լեզուն չըտ- կելով, ոճը միշտ մի օրինակ չէ, մի քանի գա- լառաբարբառներու խառնուրդ մ'է. աւելի լաւ կ'ընէր, մեր երկու բարբառներէն մին կամ միւսը ընտրելով, և կամ իւր գործածած ոճին աւելի հագ տանելով:

A. Saissy և Ս. Մ. ՂԱԻԹ-ԲԷԿ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՃԴՈՒԹԻՒՆԵՐ

« Բրօկրէ » ի մէջ կը կարգանք.

ԼՈՆՏՐԱ, 16 Օգոստոս

Լոնտրայի թրքական դեսպանը հետեւալ ծանուցագիրը հաղորդեց մամուլին:

Սասունի վերջին զէպերուն վրայ եւրոպական մամուլին մէջ հրատարակուած լուրերը՝ զէպերուն իրականութեան հետ ո՛չ մէկ կերպով համաձայն են:

ձիշտ չէ որ Սաղանիկի զիւղը հրդեհուած ըլլայ, և բա- ցարձակապէս սխալ է որ 200 Հայեր սպանուած ըլլան: Ահաւասիկ ինչ որ անցած է:

Անգրանիկ սնուն հոշակաւոր խմբապետին առաջ- նորգութեան ներքեւ 16 հայ աւագակներ, Սաղանիկ գիւղին քով փոքրիկ մատրան մը մէջ կ'ապաստանին. և որովհետեւ, օսմանեան իշխանութեանց կողմէն կրկնուած ստիպումներուն հակառակ, կայսերական զօ- րաց վրայ կրակ կ'ընեն, մատուռը կրակի տալէ ուրիշ միջոց չ'մնար: Աւագակները փախչելու ստիպուած՝ ա- մենքն ալ կը բռնուին կամ կ'ապաննուին այն ատեն, բայց առաջ իրենք նախադրածալ ըլլալով՝ կրակ կ'ընեն օսմ. զօրաց վրայ որոնցմէ երկուքը մահացու կերպով կը վերաւորուին:

Հանրային անգործութիւնը վրդովելու բնութիւն ունեցող բան մը չը պատահիր միւս գաւառակներուն մէջ, և, կայսերական իշխանութեանց կողմէն ձեռք առնուած միջոցներուն շնորհիւ՝ թէ՛ մահմետականք եւ թէ՛ քրիստոնէայք կ'ապրին հիմա կատարեալ ներգաշ- նակութեան և ամենամեծ ապահովութեան մէջ:

Այս է Լոնտրայի Օսմ. Դեսպանատան հաղորդած տեղեկութիւնը: Սակայն եթէ օսմ. կառավարութեան համար ձախող բան մը կայ, այն է թէ՛ միւսնոյն պա- հուն որ այս ներքու մը կը արուի անգլիական լրագիր- ներուն, Անգլիոյ Արտաքին գործերու պաշտօնատունը (Foreign Office) մանրամասն տեղեկագիր մը կ'ըս- տանայ Կ. Պոլսոյ իր դեսպանէն: Հայաստանի վերջին տխուր զէպերուն վրայ Այս տեղեկագիրը դեռ հրա- պարակ չը հանուեցաւ. և չ'պիտի հանուի, մինչեւ որ անի չը հաղորդուի Լորտ Սաղապրիի, որ Վոսկիլը կը գտնուի. բայց ամենահաւաստի աղբիւրէ քաղուած տե- ղեկութիւններու վրայ հիմնուած, հետեւեալ զէպերը տեղի ունեցած են իրենց բացարձակ իսկութեանը մէջ:

Արաղանքի գիւղակը, Սասունի գաւառին մէջ, 24 տներէ բաղկացած, որ կը պարունակէր 300 բնակիչներ, կայսերական զօրքերէն հիմնայապակ կործանուած ու գերփուած է. պատ մը չէ՛ մնացեր կանգուն: Բնակիչ- ներն անյայտացած են և իրենց մէջէն 100է աւելի զի- աւկներ գտնուած են: Այս ջարդը տեղի ունեցած է Յուլիոսի վերջին կիսամսէին:

Քուրդերը Վանայ Փոխ-Հիւպատոսին և Տիգրա- նակերտի Ֆրանս. Փոխ-Հիւպատոսին վրայ ցերեկով յարձակած են վերջերս Ո՛չ միայն ստոնց վրայ յար- ձակողները, որոնք ծանօթ են օսմ. ոստիկանութեան, չ'են ձերբակալուած, այլ և ո՛չ մի քննութիւն բացուած է Բ. Դրան կողմէն:

Սասունի ու Տիգրանակերտի մէջ ու չըջակայքը, հալածանքները վերսկած են ճիշտ ա՛յնպէս ինչպէս էին 1894 ի օրերը. վանքեր կոխուած, տղաք խռոտան- գուած, կիներ լլկուած, ելն: Ու այս ամենը, օսմ. իշխա- նութեանց քթին տակ, որոնք նոյն անկարելիք ընթացքը բռնած են ինչպէս 1894 ին, մինչդեռ իրենք կըսեն թէ՛ յարձակողներուն հետը չ'են:

Ինչպէս որ վերեւ ըսուեցաւ, այս և ուրիշ եղե- լութիւններ թուող տեղեկագիրը հաղորդուեցաւ անմի- ջապէս Լորտ Սաղապրիի, Շուքրի մէջ. բայց, Արտաքին Գործերու պաշտօնատունը այժմէն հրահանգներ տուաւ Սըր Նիգոլա Օ'Պօստրի, Կ. Պոլսոյ անգլ. Դեսպանին, որ, Ֆրանսական ու Ռուսական իր պաշտօնակիցներուն հետ համաձայնել յետոյ, պաշտօնապէս ըողքէ Բ. Դրան այս զէպերուն դէմ, և Սուլթանին ուշադրութիւնը հրաւիրէ այս ծանրակշիւ անպատեհութիւններուն վրայ որոնք իրեն համար կրնան առաջ բերել 1894 ի եղերա- կան զէպերուն կրկնութիւնը:

Պէտք է սակայն յուսալ թէ՛ Եւրոպա չ'պիտի ներէ որ իր գոններուն առջև ալ կատարուի Ծայրագոյն Արեւելքի բարբարոսութիւնը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԼՈՆՏՐԱ, 20 Օգոստ. — Բէքինի վերջին լուրերէն կը հասկցուի թէ՛ զաշնակիցները կը շարունակեն պա- շարել Ձինները կայսերական Պալատին շրջափակին մէջ: Լի-Բինկ-Հանկ, օտարեւտ ռիսերիմ թշնամին պատերազ- մին մէջ սպաննուած է:

ՇԱՆԿ-ՀԱՅ 20 Օգոստ. — Պաշտօնական տեղեկա- գիր մը կը յայտարարէ թէ՛ կայսրն ու կայսրուհին Բէ- քինէ 60 մղոն հեռի կը գտնուին իշխան Թուանի տիրա- պետութեան տակ:

Լի-Հոնկ-ՉԱՆԿ Միացեալ-Նահանգներէն խնդրած է որ Պ. Գոնթերի հետ ուրիշ Ամերիկացիի մ'ալ պաշ- տօն տան հաշտութեան բանակցութեան համար:

Պաշտօնական լուրերու համաձայն, բարձրաստիճան պալատականներէն 8 հոգի ալ գլխատուած են, որոնց երկուքը գտարներուն հակառակորդ էին: Իշխան Ձինկ՝ Եունկ-Լուս բանտարկած է:

ԲէթթիՍՊՈՒՐԿ 20 Օգոստ. — Ռուսիան արգիւց Ձինաստան զէնք զրկուի:

Շէ-ՅՈՒ 20 Օգոստ. Դաշնակից գնդերը կը ուժա- կոծեն կայս. պալատն ու քաջուած է կայսրուհին:

Թիէն-Ձին 23 Օգոստ. — Ֆրանսական օգնական զօրագունը կը յաւ միանալ զաշնակից բանակին գլխա- լոր թեւին հետ ու մասնակցիլ Բէքինի առման:

Գերմանական յառաջապահ գունդը հասաւ ամսոյս 7 ին:

ՆԱԲՈՂԻ 23 Օգոստ. — Ուալտըրսի կոմսը նաև մը- տաւ երկ կրկնուէն զէպ 'ի Ձին:

ԼՈՆՏՐԱ 23 Օգոստ. — Ամերիկացիք 38 մարդու կորուստ ունեցան Բէքինի առման. Սիէս երը, որ առա- ջիններն եղան թաթար քաղաքը մըտնողներուն, 2 մարդ միայն կորուսին:

Բէքինի յարձակումը ուսական զօրագնդին 120 մարդու կորուստ արժեց. զօրավար Վասիլէվսքի վիրա- լորուեցաւ:

Տէրութեանց փոխադարձ նախանձին հետեւանքով, 7000 տակառաչափ տարողութեամբ 28 մարտանաւեր անշարժութեան դատապարտուած են Շանկ-Հայի և Վասիլի ջրերու մէջ:

ԲԱՐԻՉ 23 Օգոստ. — Տէրութիւնները մերժեցին բանակցութեան մասնել Լի-Հունկ-Չանկի հետ, բաւարար չը նկատելով անոր հեղինակութիւնը:

ՇԱՆԿ-ՀԱՅ 23 Օգոստ. — Ֆրանսայի 100 ծովային զօրքեր զամաք ելան Շանկ-Հայի ֆրանսական կառուա- ծին մէջ: Տպաւորութիւնը խիստ լաւ եղաւ:

Լ Ր Ա Ք Ա Ղ

ԽՈՒՎՈՒԹԻՒՆԻՒ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Վանէն 13 Օգոստ. Թուականով քաջուած հեռագրէ մը կ'իմացուի թէ՛ անգլիական փոխ-հիւպատոսը կուսա- կալութեան կեդրոնն երթալու ատեն Էլքէսի քով յար- ձակում կրած է 10 զինուած Թուրքերէ:

Իր թարգմանը վիրաւորուած է ու իր գոյքերը թալ- լուած:

Փոխ-հիւպատոսը յա՛ողած է Վան վերադառնալ ողջ և առողջ, անմիջապէս յարձակման լուրը հաղոր- դած է իշխանութեանց, որոնք գունդեր զրկած են աւա- զակներուն վրայ:

Անգլիական Դեսպանն այս մասին զիտողութիւն- ներ ուղղած է Բ. Դրան, պահանջելով յանցաւորներուն պատիժն ու գողցուած առարկաներն ևս տրուիլ:

Կրուի նաև թէ Տիգրանակերտի ֆրանսական հիւ- պատոսը, որ Աղքեսանդրեակ կ'երթար, յարձակում կրած է Թուրքէ մ'որ իրեն վրայ հրացան պարպած է. հակա- ռակ Դեսպանատան բողոքներուն, եղեռնագործը դեռ ձերբակալուած չ'է:

Հերքումներուն հակառակ, ա՛լ կասկած չէ՛ մնա- ցեր Արաղանքի ջարդերուն մասին, որովհետեւ զէպը հաստատած են Կարնոյ և ուրիշ շատ մը հիւպատոսնե- րուն տեղեկագիրները:

Դեռ չ'գիտցուի զոհերուն թիւը:

Արաղանքի գիւղացիները կը յայտարարեն թէ ի- րենց մէջէն 500 հոգի անյայտացած են, բայց կարելի չէ գիտնալ թէ՛ ասոնք ամենքն ալ սպաննուած թէ՛ մէկ քանինքը յաղողած են մօտակալ լոճները փախչելու: Ֆրանսական ու Ռուսական դեսպանները Բ. Դրան ուշադրութիւնը կը հրաւիրեն Սասունի ջարդերուն վրայ: Շատ մը խօսքերու տեղի կուտայ այն իրողութիւ- նը թէ՛ Հալէպի կուսակալը, էնիս Բաշա, իր պաշտօնին վրայ կը մնա գեռ, մինչդեռ չորս դեսպաններ հակա- ռակած ու բողոքած են անոր անուանումին դէմ:

— ԺԱՆՏԱՆՏԸ. — Բովանդակ եղիպտոսի մէջ զէպ մը չէ պատահած. վիճակացոյցը ներմակ է:

Մ Ա Ն Ր Ա Լ ՈՒ Ր Ե

— Երկրագնդին վրայ 60 ծնունդներէն մին երկ- լորեակ է:

— Գերմանական բանակին մէջ 8000 աղանի կը գործածուի իրիւս լրատար:

— Անգլիացիք օրը 20 միլիոն գնդասեղ կը գոր- ծածեն:

— Եւրոպայի մէջ երկու մայրաքաղաքներ կան —Լոնտրա և Ս. Բէթթիսպուրկ— որոնք չէ՛ առած թըշ- նամին:

— Անգլիոյ մէջ 1860 ին 5801 վայրաշարժ մեքե- նայ կար, անցեալ տարի 19,828 էր ասոնց թիւը. ամեն մէկ վայրաշարժ կ'արժէ 3000 ոսկի. ուրիշն ամենքը կ'արժեն 59,484,000 ոսկի:

— Երիտասարդ թագուհի Վելիէլինի շատ գո՛ մնա- ցած է Գերմանիոյ կայսեր՝ զինք 15դ հիւսուարներու գնդապետ ընտրելէն, ամիսը մէկ անգամ թագուհին իր գեղապանոյճ համազգեստով բանակին հետ մարդանք կընէ և շատ կը փառաւորուի զինուորներէն:

— Յունաստանի թագուհին կը պարծենայ թէ՛ ինք՛ է միակ Մովսէսի թագուհին : Արդէն Աղեքսանդր Գ. կայսրը գիտէր որ նա ծովը շատ կը սիրէ, անոր համար փոխանակ զնոյրը, նաև տուած է անոր :

— Աշխարհիս մէջ օրը 3 ու կէս միլիոն գրչի ծայր կ'սպասի :

— Վիզիթորիա թագուհին ձորճ թագաւորէն մնացած սովորութիւն մը գեռ կը պահէ. թագուհին կերակուրը պատրաստող ամեն խոհարարի անունը պէտք է ոսկեղօծ տառերով նշանակուի պ'ակներուն վրայ :

— Չուս ազամանը կեղծէն որոշելու համար թուղթի մը վրայ մատիտով պզտիկ սեւ բիծ մը նշանակէ՛. յետոյ անդամանդին մէջէն այդ բիծը զիտէ. եթէ զայն պղտոր կամ քանի մը հատ ու անհետ տեսնես, գիտցիր որ ազամանը կեղծ է, որքան ալ մեծարժէք ըլլայ :

— Պարսից Եահն Սիրամարգի կոչուած Գահր. համակ արծաթ ոսկիապատ, վերէն վար մարգարիտ է փոռը (սէտճատէ) որուն վրայ կը նստի amethyste սպէ տած, բարձր, ուր գլուխը կը դնէ, մարգարտայեռ է. այդ գահը կ'արժէ 5,000,000 ոսկի :

# Բ Ա Ն Ա Ս Է Ր

Հ Ա Ն Պ Ե Ս

Հ Ա Ն Ա Ս Ս Ա Վ Ա Ն, Պ Ա Ս Մ Ա Վ Ա Ն, Լ Ե Ջ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Վ Ա Ն Ե Ի Ք Ն Ն Ա Վ Ա Ն

Կը հրատարակուի երեք ամիսն անգամ՝ մը, տարեկան չորս գիրք Տնօրինութեամբ

Կ. Յ. Բ Ա Ս Մ Ա Ջ Ե Ա Ն Ի

Եւ աշխատակցութեամբ ազգային եւ օտար արեւելագիտաց

ԲԱՆԱՍՏԷՐ Ի տարեկան գինն է 20 ֆրանք—8 րբ. վեցամսեայն՝ 10 ֆր. — 4 րուբլի :

Մէկ գիրքը կ'արժէ 6 ֆրանք :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆՆԻԿ Է :

ԲԱՆԱՍՏԷՐ Ը շատ քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափագ ունեցողները ժամ առաջ յայտնեն իրենց հաճութիւնը :

Մեր հասցէն է՝

BASMADJIAN

112, Bd. Rochechouart

PARIS

ԲԱՅՈՒՄԸ Է

## Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հ Ա Յ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ Ի

Ա Շ Ե Ա Ս Ա Ս Ի Ռ Թ Ի Ւ Ն

Հ. Ղ. Վ. Ա. Լ. Ի. Շ. Ա. Ն. Ի.

Գործս է Հաւաքումն պատմաց Հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչև ժէ դար: Հաւաքիչն աշխարհաբար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ և ծանօթութիւններ իւրաքանչիւր իշին ներքեւ :

ՀԱՆՐԱՄԱՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. քառածալ մեծագիր, չքեղ թղթոյ վրայ, և պատկերազարդ :

Բաժանորդագիրն է 30 ֆրանք կանխիկ ճանապարհի ծախքը մեր վրայ: Յետ աւարտման պիտի վաճառուի 30 ֆրանքի :

Բաժանորդագրութեան ժամանակ զեղջ չի լինիր. բայց 10 օրինակ բաժանորդ գտնողին օրինակ մի ևս կը տրուի ձրի :

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

## « Լ Ո Ւ Ս Ի Ն Ե Ա Ն Ք »

ԳՐԵՑ

Մ Ե Լ Ի Ք Ս. Դ Ա Ի Ի Թ Բ Է Կ

160 էջ, տպարան Վիեննայի Միթարեանց 1900. գինն է 2 ձր.

Կը ծախուի հետեւեալ պայմաններով՝

Չորս հարիւր օրինակ Արարկիբի Որբանոցին համար. երեք հարիւր օրինակ Կիպրոսի Որբանոցին համար. իսկ մնացած 300 օրինակը հեղինակին համար :

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքերն հանելու և բարեկամներու նուիրելու համար. իսկ միւս օրինակները բոլորովին անձեռնմխելի են և հեղինակը նուիրած է հայ յիշեալ երկու որբանոցներուն :

## ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բացատրիկ պրակ մը կը հրատարակէ : Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրըզամէթր, լայնք 30 հրդմ. : Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է : Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր : Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ : «Բազմավէպ»ի այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անգրանիկ «Հայ պատկերագրութիւն» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերագրութիւններուն :

Կը տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներու :

Գինն է ԿԱՆՆԻԿ 2,50 ֆր. կամ 1 րբ. 50 սէնթ :

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն մահն ազնիւ ու զթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին, համեստ լուծմայ մը բարեհաճին ձգելու հայ որբանոցներու գանձանակին մէջ :

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբանոցներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»ի պրակներուն մէջ :

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանթիմ, փափագողք փութեան յղել իրենց ծանուցումները :

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue « PAZMAVEB »

( St. Lazar )

VENISE

( ITALIE )

## Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Տ Ի Գ Ր Ա Ն Հ. Թ. Ս Ա Ի Ա Լ Ա Ն

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Վ Ա Ն Յ Ո Ւ Շ Ե Ր

Ս. Գարբինեան տպարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիճաբար պատկերով զարգարուած՝ ի լոյս ելնելու մօտ է հարիւրէ ունիլ էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման : Ինքնակենսագիրն, Ջովիւսիոյ հին ծանօթ գրական ղէմքերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էօսէմիշ վարած ուսուցչական եւ այլ կարիւր պաշտօններու բերումը՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է գրաւոր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս գիտցած է ճարտար եղանակաւ մը խոսնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարդալ անձանձրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ :

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փափագողք կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ զիմելով

Ս. Դ Ա Ր Բ Ի Ն Ե Ա Ն Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Ի Պազար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱՀ. ՈՂՁ

Le gérant, J. MUNIER.

## ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍՍԿԻ

ԿՈՒԶԷՆ ՀԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

Ժ Ս Մ Ա Ց Ո Յ Ց Ս Ը

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

## ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԻՒ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենադիւրամատչելի գներէն սկսելով մինչև ազամանազարդ : Արծաթ ժամացոյցներ 50 զրուչէն սկսեալ : Նիքէլ արձանթուառ ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ. նաև Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ չըլթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաև պատի եւ քօնսօլի բազմազան բանաւիւններ :

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն :

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի :

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

## ՊԵԼԱԵԱՆ-ՇԻՃՄԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

Տիկնաց եւ արաց

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիմի մեծ պողոտային վրայ, Տայիրայի Սանիթի դիմացը, նախկին երկհարկան գործիներու վաճառատներ :

Վերջերս Ամերիկայէն հոս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատշաճաւ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յանախորդները, գործի մաքրութեան, գիններու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն :

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով :

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին :

## ԱՏԱՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիբէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը : Կը բժշկէ բերնի և աղուայի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 :

ՁՈՒԼԻՉ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱԸ

Շարա Մուհամմէս Ալի, Հապպանիյի

Կը ձուլեն, կը չինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն, Յաճախորդները գոհացուող պայմաններով :

## ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՎՔ 24 ՕԴՈՏՈՍ 1900

4266	4046	2902	4507	394	3195
6364	7766	2789	1056	2327	9974
8775	2764	6694	3147	1913	194
9644	1500	520	6813	1985	1443
		756	5251	9589	

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻԵԱՆԻ — Պազար Մուրուր